

ՄԵԶՄՈՒՄԷ ԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand'Rue de Pera, Taksim 65

Համաքառա իսի սեմա եւանի ՁԱՐԾԵՆՊԻՉ ՎԵ ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԻՐԹԵՍԻ

Կիւնյեթի լեզր օրումուր

مجموعه اخبار

باخواهی تقسیم جلدی سوم 70

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՊՐԻԼԻ ԳԻՏԱԿԱՆ ԴՆԵՆԴԵՐԸ. — Իսթանպուլ ինչի ունեւելի 60 շրուշ, — 6 ալըղը 35. — Թաշրա ինչի ունեւելի 85, — 6 ալըղը 45 ղշ. արր. — Բաթա իւնեւելի պիղէ ալիտ տիր. — 15 կիւնյեթ նիւսիսէսի 60 բարա տիր. — ԻԼԱՆԱԹ ՀԱՐԹԻՍՐԸ. — Լինճի սահիֆէնի պէնէր սըրասը 5, Ձնճի վէ 3իւնճի սահիֆէնի պէնէր սըրասը 3, վէ 4իւնճի սահիֆէնի պէնէր սըրասը 1 շրուշ տուր. — Ձօգ տէֆա տէրճ իսիլէճէք իլանաթ ինչի սըրաքա բազարը օրումուր. — Նիւսիսէսի 30 բր. տիր.:

Հազէթայա միւթէալիք խուսուսաթ ինչի ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՕԼԱՅԵԱՆԱ միւրաճաթ օրումուր. — Իտարէխանէ՛ Պէյօղլումսա ճատտէի լէպիւրէ Ն. 85:

ՀԱՆՐԵՍ ԶԵՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՁՄՄԱՌՈՒ ՎԱՆՔԻՆ ՄԵՋ

Այս տարւում երկարատեւ անձրեւները տակաւին չէին դադարած՝ երբ կը հնչէր զուարդարար աւետիք՝ զարնանադուարճ աւուրց, որով կը պնէին Լիբանանու սահրերը միտնէ Սանիթայ սպիտակափայլ զագաթները. երեւակայելու է այլ եւս Ձմեռ մասի վեճ սարաւանդին ժպիտն եւ ցնծութիւնը:

Սաին մ'էր որ Նորին Ս. Օծութիւնն Ամենապատիւ Պօղոս Պետրոս ԺԱ. Էմմանուէլեան Կ-Պատրիարք Տանն Կիլիկիոյ իւր բարձր հրամանն առաքած էր Արհ. Սիւրբան Մատթէոս Եպիսկոպոսին Կիսարիոյ որ Ձմեռ վանքն զայ ձեռնադրութիւններ կատարելու:

Փետր. 23ին անձրեւոտ օր մ'էր՝ Բաւանդարաց երկուշաբթին, երկուշաբթի Ժամերգութիւնն աւարտած էր և միաբանք կ'ըզօմուէին մի ժամու չափ ըստ սովորութեան. և ահա հեծեալներ նշարեցին երեւնափայլաւոր անտառակին լոյսերը ու դիտակներով նստեցին որ եկողն ակնկալեալ Արհ. Սրբազանն էր. զանգակներու զանգիւնն սկսաւ յողջին բարեգալստեան լեւեներն ու ձորերը թնդացնել և շղնդեցաւ մինչեւ ցիւտ վանուցս և Բոլոր վանական հասարակութիւնն զիմաւորեց Նորին Սրբազանի զորն զորն վանքին հայրապետական տարազիւ զգեստաւորեալ սարկաւազաց եւ դպրաց առաջնորդութեամբ խնկօք, մօմիղիօք և «Թագաւոր գոյով» հոգեզմայլ շարակնով, թափօրով եկեղեցի մտան, որ շքեղապէս զարդարեալ յայլապէս լուսավառած էր. Արհ. Եպիսկոպոսը Առաջ խորանին առջեւ իրեն համար յատուկ պատրաստուած չորքարանին վրայ ծնրադրած գոհութեան աղօթքը կատարելէն յետոյ Եպիսկոպոսական Աթոռը բազմեցաւ, մինչեւ որ արկաւազները խնկարկութիւնը աւարտեցին և զպրաց դասը «Հրաշափառ» իւր երգեցողութիւնը կնքեց:

Այն ատեն ոտքի արձանանալով դէպի ժողովուրդը դարձած քանի մը վարկեանի չափ յուզեալ սրտիւ խօսեցաւ. նախ փառք տալով Աստուծոյ, մասնաւոր եղանակաւ շնորհեց նախանամ Տեալութեան, իրեն ըրած մեծ շնորհքը, որ երեսունեօթն տարւումն բացակայութեան յետոյ բաղդն ունեցաւ այսպիսի պատուաբեր առթիւ իւր բարոյական սննդաւայրը գալու, այցելելու իւր նախնեաց առաքելաշնորհ Հայրապետաց նշխարները, որոց ոմանց ականատեւ եղած՝ բերան ի բերան խօսած է և Յետոյ յորդորեց զամենքն որ աշխատին նոսրացողով ոգեւորիլ, և նոցա առաքելութեամբն առաքելանալ. Կնքեց խօսքը մեր Վեհափառ Կայսեր թանկագին արեւադարձեան համար սրտագին մաղթանքներ կարդալով, Եկեղեցիէն նոյն բազմութեամբ աստան առաջնորդուեցաւ. անդ Ընծայարանին աշակերտները բարեգալստեան ձօներ ընծայեցին Նոս

րին Արհիպատուութեան, հայերէն, տաճկերէն և գաղղիերէն լեզուաւ, և նոյն ժամայն ամբողջ վանական մարմինը ոտք ելլելով «Համիտիէ» քայլերդն երգութեամբ վեհափառ ինքնակալին կենաց երկարութեան համար:

Ճամբորդութեան յոգնութենէն հանգչելու համար քանի մ'օր հանգիստ առնելէ ետեւ Արհ. Եպիսկոպոսն իրեն յանձնուած նուորական պաշտօնն ի գործ դնելու սկսաւ: Մարտ 7ին ըստ նոսր, հինգ ուսումնասարտ աշակերտ ութօրեայ հոգեւորական կրթութեամբ պատրաստուելէն յետոյ Միաբանութեան ուխտադրութիւնն ընկելով, յաջորդ օրը Կիսարիական և Առաջնորդութեան Ս. Գառնիկաններն ընդունեցան: Նոյն ամսոյն 23ին, Աստուածաբանութիւն և փիլիսոփայութիւն ուսանողներն չորս փոքր աստիճաններ ընդունեցան. և 25ին Աւետման օրը հինգ սարկաւազները Բահանայ ձեռնադրուեցան և կոչուեցան Ստեփան Վ. Լալիկեան (Նորոյն օրը), Քերոբէ Վ. Յակոբեան (Ստեփ), Սահակ Վ. Քէլիեան (Գերմանեկցի), Յովսէփ Վ. Բաջուրի (Մամուրգոհ) և Յովհաննէս Վ. Գառնիկեան (Գառնիկցի):

Ձեռնադրութեան հանդէսը շատ շքեղ և կարգաւոր եղաւ. ներկայ էին հասարակութեան անհատք և օտարք: Այսպիսի զեղեցիկ հանդիսի յիշատակը մշտապէս պահելու համար նորոյն յարմար քանակայից և ձեռնադրիչ Եպիսկոպոսին լուսանկարն միախառնեց առնուեցաւ: Ապա եկեղեցական և աշխարհական խումբն առաջնորդութիւնն ընդունելով անհեղձ հրաւիրուեցաւ, ուր ձօնեցան շնորհակալութեան և երախտագիտութեան կրկին բուրմունքներ, որք ուղացան նորապսակ քահանայից վառ սրբերէն, նախ դէպ ի Գեր. Աղեքսանդրեան Գերապայեա Մեծաւորն վանուց որ անընձ ճգարք դպրոցին բարգաւաճ յառաջդիմութեան ետեւէ է. երկրորդ անգամ դէպ ի Արհ. Սիւրբան Գերապայեա, որ հանգեցաւ հակառակ օգոց խտութեան և ճամբաներու դժուարութեան ծով և ցամաք կտրել և գալ Լիբանան այս մեծ ուրախութիւնն առթիւ ըզմանդակ Ձմեռման հասարակութեան: Ձեռնադրութեան հինգերորդ օրը Նորին Սրբազանութիւնն մեծաւ գոհութեամբ մեկնեցաւ վանքն իւր ատուածապալ թեմին գործոց պատճառաւ: Բովանդակ վանական մարմնոյ շնորհակալքն յայտնելով կը մաղթենք նմա բարեբաւորիկ ճամբորդութիւն և իւր օգտաշատ ձեռնադրութեանց բարեյաջող ելք:

Այս առթիւ կ'ուզեմ երկու խօսք եւս աւելցնել Ձմեռու Ընծայարանին վրայ, որ դուրած կարգին համաձայն երկու տարի անգամ մը շրմին համաւարտ քահանայացուաց ընտրի զսա մի կը հասցնէ: Այս աստիճանաւոր յօրինուածութիւնն Ձմեռու վանքին հետ տնկելով զարգացիւ էր և երջանկալիաւ Գրեգոր Պետրոս Ը. Կաթողիկոսի օրով կատարելութեան ծայրը հասած պէսպէս կանոնօք և կարգադրութեամբ ծաղկեալ, ետքէն այլեւայլ պատ

ճառաւ սոյն Ընծայարանը ժամանակ մի դանդաղադարձ ըլլալու ստիպուած էր: Սակայն դարձեալ իւր նախկին ուղղութիւնն և փայլն առաւ, երբ քահանայութեան յառաջ վանուց վարկութեան ղեկը առաջին անգամ Գեր. Ա. Աղեքսանդրեան Գերապայեաին հմուտ և խոհեմ առաջնորդութեան յանձնուեցաւ. այդ շրջանին մէջ առաջին պայծառութիւնն ասացաւ Ձմեռ, թէ՛ նիւթական, թէ՛ բարոյական և թէ՛ բարեպաշտական տեսակէտով. Իւր սկզբունքը եղած է միշտ հոգն կատարելութեան հետ կցորդել նորոյն լաւ մասերն եւս առանց նախկին եղծանելու. և այս կերպով ընթացած է գործունէութեան ամեն ճիւղերու մէջ, նաեւ վանքին մէջ կառուցուած շինութեանց և նորոգութեանց մէջ, զորոնք ըրած է և կը շարունակէ Գերապայեա Աղեքսանդրեան աշակերտաց թիւն եւս մինչեւ 25ի հասցուց: Վերջապէս սոյն արդիւնաշատ մեծաւորն ուղարկաւ աշխատանքն եղանք յառաջ բերելու շառագոյնը, աւելորդ և երկար կ'ըլլար. ուր թողու՞մ որ յայտնի ճշմարտութիւնն գոյիւ զայն նստեցնել է և Այս միայն կ'ընէ՝ որ անցան տարի Կ. Պօղոս Գրեգորեան անունը շարունակելով «Հոգեւոր Զէյթն» իւր անդուլ և անձնաձիր վաստակաց տոկոսնութիւնն զննատեղով՝ արդարապէս վարձարեց զնա Թագաւոր-Արքայի շքադրով:

Գլխաւոր մտադրութիւնը նուերած է Ընծայարանին ուսմանց տասնամեայ շրջանը առաւել եւս օգտակար ընելու: Աշակերտք երեք տարի կը պարապին հայերէն քերականութեան և օտար լեզուաց՝ գաղղիերէնի, լատիներէնի, տաճկերէնի և արաբերէնի. երկու տարի ճարտասանութեան, բանաստեղծութեան և ուրիշ օժտնդակ ուսմանց, ինչպէս է թուարանութիւն, աշխարհագրութիւն, նուերական և արտաքին պատմութիւն. երկու տարի փիլիսոփայութեան, երեք տարի եւս աստուածաբանութեան, որոնց հետ կը համընթանան բնագիտութիւն, կենդանաբանութիւն, եկեղեցական պատմութիւն, իրաւաբանութիւն և Ս. Գրոց հիմնութիւն: Այս դարաւոր Ընծայարանը ի նոսր սկզբնաւ մինչեւ ցայժմ ընծայած է ամեն թեմերու առաքելաւան քահանայներ, և ներկայից թիւը կը հասնի ընդամենը իւր յիստուն անձի: Կը մաղթեմ այսպիսի ազգօգուտ հաստատութեան մը աւելի զարգացում յառաջդիմութեան, յարատեւութեան և պայծառութեան:

Մ. Ձ.

ՅՈՒՆԵՆԱՆԻ ՄԸ ԱՌԹԻԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ժ. Վ. ԹՈՒՄԱՅԵԱՆ

Բաւական տարիներ առաջ էր: Նոր քարոզիչ մը մասին կը խօսէին, ո՛չ այն անտարբեր շնչով մը որով կը յիշուէին ու է յայտնութիւններ, այլ Չերմ համակրանքի եղանակով մը, որուն պնուշութիւնը շատ աղէկ զիտեկ ժողովուրդական մարդիկը, անոնք որոնք իրենց լեզ

ունին, գրչին կամ ազգանդին շնորհիւ տեղ մը գրաւած են սիրտերու մէջ այն ժողովուրդին, որուն հարազատ դաւաններն են:

Այս քարոզիչը Թումայեան Վ. ն էր: Եւրոպայէն դեռ նոր վերադարձած, սկսած էր արդէն իւր ձայնը արձագանգել տալ եկեղեցիներու և բարեպաշտ փրոտերու մէջ: Այս ձայնը հաւատքի, կրօնի և Աստուծոյ վրայ կը խօսէր, անանկ ներդաշնակ չեղած մը, որմէ չէին կրնար կշտանալ մտիկ ընողները:

Առաջին անգամ զայն տեսայ Ս. Յովհանն Ոսկեբերան եկեղեցին, ուր երկու տեղ հոծ ու ընտրուած բազմութիւն մը եկած էր մտիկ ընելու քարոզիչը:

... Բնաբանը հասիկ հատիկ արտասանելէ ու աշխարհաբար թարգմանելէ ետք, սկսած էր խօսիլ ներդաշնակ եղաւ նախաւորումով մը, զգալով, զգացնելով, և բառերը կը սանկն բերնէն դուրսն, հնչուէ ու երգի մը պէս կարծես:

Ա, խօսքին երգը, Ծառ քիչեր հասկըցած են այդ արուեստը և շատ քիչեր կրնան արտայայտել զայն: Մեր մէջ մեր ողբացեալ ողբերգակն էր որ դասած էր հաւանքն արձանութեան միայն, բնաբանը վրայ դրուած չեղածով, լոկ բառերու երաժշտութեամբ:

Ու քարոզիչին խօսածքին մէջ կարատիկա, քաղցրահնչիւն, մեղրօրօք բան մը, որ թաղուէ հանդը մը կը պատճառէր ունկնդիրին:

Պարզ էր անկա իւր ամբողջութեան մէջ: Սեփ սեւ մօրուք մը, ուր անկարեւի էր գտնել թեւ մը արծաթ. սեւ աչքեր. Արեւելեցիի համակրելի կերպարանք մը, ուր կը ցոլար բարի ու մաքուր սրտի մը ամբողջ արտայայտութիւնը:

Մեծ մեծ շարժ ու ձեւեր չունէր խօսած ատեն, բայց իւր հոգիէն բան մը կը դնէր այն բառերուն մէջ զորս կ'արտասանէր ծանր, մէկիկ մէկիկ քանդակելով կարծես ունկնդիրներու սրտին մէջ:

Ու քարոզէն ետք, կը մեկնէի եկեղեցիէն ամբողջ սրտովս համակրած այս քարոզիչին, մինչ քովին ներս հիացումի արտայայտութիւններ կը փոխանակէին, հեմայուած անոր խօսքերէն և կատարելապէս համոզուած ըստններուն:

Քարոզիչին ամենէն մեծ փառքը չէ՛ այս:

Քիչ ատեն ետք, Թումայեան Վ. ը իւր ուսուցիչ կ'ունենայինք:

Ամենքս ալ կը սիրէինք զայն: Առաջները միայն հայերէնի դաս կուտար. ետքէն գերմաներէնն ալ ստանձնեց: Այն ժամանակ սկսած էի ոտսնաւոր գրել, ինչպէս ամէն դպրոցական, և կ'ուզէի որ բնաւ գրաբարի դասին չի նայեր, այլ միայն շարադրութիւն տար, որովհետեւ գրաբար բայեր խոնարհելէ աւելի կը նախընտրէի նշարադրել թէ արեւը ինչպէս կը ծագի, ինչպէս մայրը կը մտնէ, լուսինը ինչ կ'ընէ գիշերուան խորհրդաւորութիւններուն մէջ, վարդին թերթիկներուն մէջ քանի՞ կաթիլ ցող կայ, վարօ

ԲԱԹՐԻԳԽԱՆԷ ՀԱՎԱՏԻՍԻ

